

13013



ՀԱՄՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիոյան
«27» 11 2024թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ N 252 - 24

Նախաձեռնող՝

«Շին կոմֆորտ» ՍՊԸ
Գեղարքունիքի մարզ, Գավառ համայնք

Գործունեությունը՝

Սիսիան համայնքի Շաքի բնակավայրի
կրթահամալիրի կառուցում
Սյունիքի մարզ

Առդիր՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԿՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

ԲՓ № 252 - 24

«27» Ապրիլի 2024թ.

Սյունիքի մարզի Սիսիան համայնքի Շաքի բնակավայրի կրթահամալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«Շին Կոմֆորտ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն
Գործունեության կատեգորիա՝	«Բ» կատեգորիա
Տեղադրման վայրը՝	Սյունիքի մարզ, Սիսիան համայնք, Շաքի բնակավայր

Ներածական մաս. «Շին Կոմֆորտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնահատման հաշվետվությամբ նախատեսվում է Սյունիքի մարզի Սիսիան համայնքի Շաքի բնակավայրի կրթահամալիրի կառուցում:

Գործունեությունն իրականացվելու է Սիսիանի համայնքապետարանի կողմից տրամադրված 2024թ. հուլիսի 25-ի N34 ճարտարապետահատակագծային առաջադրանքի հիման վրա, անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման վկայականով ամրագրված՝ 1.47 հա մակերեսով հողամասում, որի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման:

Նախատեսվող գործունեությունն իրականացվում է քաղաքաշինության կոմիտեի և Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի պատվերով իրականացվող «Մինչև 2026 թվականը կառուցվող, հիմնանորոգվող կամ վերակառուցվող 300 դպրոցների» ծրագրի շրջանակներում:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Բ կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Համաձայն ՇՄԱԳ հաշվետվության՝ դպրոցի տարածքը մասնակի կառուցապատված է, որն ունի պարզ երկրաչափական հորինվածք: Դպրոցը կառուցված է 1971թ.-ին՝ 2462.54 քմ մակերեսով, առկա է կաթսայատուն՝ 56.43 և 12.6 քմ, ավտոտնակ՝ 48.45քմ, ենթակայան՝ 25.6 քմ, դպրոցում սովորում է 91 երեխա:

Համաձայն տեխնիկական առաջադրանքի՝ նախագծվող կրթահամալիրը կառուցվելու է ներկայիս դպրոցի մասնաշենքին հարակից տարածքում: Ներկայիս գոյություն ունեցող շենք-շինությունները սեյսմիկ անվտանգության տեսանկյունից գնահատվել են որպես «Բ» կատեգորիա՝ ունեն բարձր ռիսկայնություն, ինչի արդյունքում քանդման ապահովումն առկա է աշխատանքները նախատեսված են դրանց ամբողջ ծավալում: Այն աշխատանքները ընդգրկվելու են.



- գլխավոր մուտքի ու մուտքերի հարթակների և աստիճանների ապամոնտաժում,

- միջհարկային սալերի, պատերի և միջնորմերի կազմատում,

- տանիքի ծածկույթների ապամոնտաժում,

- պատուհանի և դռների ապամոնտաժում՝ շեպերի քանդումով,

- շենքի ներսում առկա ինժեներական ենթակառուցվածքների ապամոնտաժում և այլն:

Գեոմորֆոլոգիական տեսակետից շրջանն իրենից ներկայացնում է միջին բարձրության լեռնային գոտի, որին բնորոշ է լավաներով ծածկված սարավանդներ, խորը կիրճերով և գետերով կտրտված լանդշաֆտ: Ռելիեֆին բնորոշ են հրաբխաէրոզիոն և ջրաէրոզիոն ձևերը, մակերևույթի խիստ կտրտվածությունը, ինչպես նաև ֆիզիկական ակտիվ հողմահարությունը: Տարածքի ռելիեֆի բացարձակ բարձրությունները տատանվում են 1680.03-1688.08 մետրերի սահմաններում:

Երկրաբանական կառուցվածքում ուսումնասիրվող շրջանի տարածքում մասնակցում են չորրորդական հասակի գետանստվածքային առաջացումները և խորքում հրաբխային ապարները: Ֆիզիկատերկրաբանական վտանգավոր երևույթներ՝ ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը, բացակայում են:

Տարածքը գտնվում է ցուրտ կլիմայական գոտում ձմեռը՝ հունվարի միջին ամսական ջերմաստիճանը – 4.3°C է, բնորոշ է շոգ և չոր ամառը՝ հուլիսի միջին ամսական ջերմաստիճանը 18.1°C է, միջին տարեկան հարաբերական խոնավությունը՝ 70%:

Կառուցապատման տեխնիկատնտեսական ցուցանիշներն են՝

- ընդհանուր հողատարածքի մակերեսը՝ 14700 քմ,

- կառուցապատման մակերեսը՝ 2904 քմ,

- բարեկարգման մակերես՝ 11796 քմ, որից կանաչապատման գոտու մակերեսը՝ 8764 քմ,

- կրթահամալիրի առավելագույն բարձրությունը՝ 11.330 մ:

Նոր կառուցվող դպրոցը նախատեսվում է տեղադրել հողամասի երկարությամբ՝ փողոցին զուգահեռ, ինչը կապահովի դասասենյակների գերակշիռ մասին հարավային կողմնորոշում:

Նախատեսվում է կառուցել բացօթյա մարզադաշտ, վազքուղի, իսկ ընդհանուր տարածքը նախատեսվում է բարեկարգել և կանաչապատել:

Համաձայն նախագծային լուծումների՝ նոր դպրոցը նախատեսված է 200 աշակերտի համար: Դպրոցը նախատեսվում է իրականացնել երկհարկանի՝ մեկ նկուղային հարկով, որը ծառայելու է նաև որպես ժամանակավոր թաքստոց: Նկուղային հարկի մակերեսը 21.6×20.4 մ է, որտեղ նախատեսված է գրադարան, խոհանոց, բուժկետ, պահոցներ, սանհանգույցներ, էլեկտրավահանակ, ջրի ռեզերվուար և պոմպարան:

Շենքը նախատեսված է երեք իրար կցված ծավալներից, երկհարկանի հիմնական դպրոցի մասնաշենքից, մարզադահլիճի և հանդիսությունների դահլիճի մասնաշենքից և մեկհարկանի մանկապարտեզից՝ նախատեսված 20 հոգանոց 2 խմբի համար:

Դպրոցի, մանկապարտեզի և մարզադահլիճների մուտքերի մոտ նախատեսված են թեքահարթակներ: Հանդիսությունների դահլիճը նախատեսված է 144 հոգու համար, մարզասրահի երկրորդ հարկի մակարդակում նախատեսված է 60 տեղանոց տրիբունա, մարզադահլիճի չափերն են՝ 24.7×18.0 սմ:

Առաջին հարկում նախատեսված են դասասենյակներ, աշխատասենյակներ և սրահներ: Երկրորդ հարկում դասասենյակներ, ինֆորմատիկայի դասասենյակ, մեթոդական սենյակ, ռազմագիտության սենյակ, ռոբոտատեխնիկայի սենյակ և ուսուցչանոց:



Դպրոցի բակային տարածքի բարեկարգման աշխատանքների շրջանակում նախատեսվում է բաց մարզադաշտ, բաց մարզահրապարակ, վազքուղի, ճանապարհներ և հարթակներ: Դպրոցին կից նախատեսվում է կառուցել կաթսայատուն:

Դպրոցի շենքի հարավային տարածքում նախատեսվում է տեղադրել՝ 175 կՎտ պիկային հզորությամբ արևային ֆոտովոլտային համակարգ՝ էլեկտրաէներգիայի արտադրության, լուսավորության և ծախսերի փոխհատուցման նպատակով:

Արևային ֆոտովոլտային համակարգը կազմված է 318 հատ միաբյուրեղային 159 (1.8x2) կեսքիջներով, 550 Վտ պիկային հզորությամբ ֆոտովոլտային (ՖՎ) վահանակներից, որոնք բաժանված են 12 ՖՎ խմբի՝ 3 խումբ յուրաքանչյուր փոխակերպիչի համար:

Կրթահամալիրի կառուցման համար իրականացվել են ներքին էլեկտրամատակարարման, արտաքին և ներքին ջրամատակարարման, կոյուղու, օդափոխության համակարգերի ինժեներական լուծումները, որոնք իրականացվելու են ՀՀ շինարարական նորմերի համաձայն:

Դպրոցի համար նախատեսվում է Topas 50 կայան՝ 9.0 մ³/օր արտադրողականությամբ նոր կենցաղային կեղտաջրերի մաքրման կայանի տեղադրում:

Դպրոցի մասնաշենքերը կառուցելուց հետո տարածքը ցանկապատվելու է 1.40 մ բարձրությամբ ճաղաշարով՝ 10 սմ բետոնե հիմքի վրա: Ապահովված է լինելու արտաքին լուսավորությամբ՝ հենասյուններով: Ֆուտբոլի դաշտի ցանկապատը՝ 4.2 մ բարձրությամբ՝ 60 սմ բետոնե հիմքով:

Համաձայն ՀՀՇՆ IV-11.07.01-2006 շինարարական նորմերի՝ հաշմանդամ և բնակչության սակավաշարժ խմբերի ազատ տեղաշարժման համար, դպրոցում ձեռնարկվել են համապատասխան միջոցառումներ:

Համաձայն գնահատման հաշվետվության՝ շինարարական աշխատանքները տևելու են 21 ամիս, որի ընթացքում օգտագործվելու են շինարարական մեքենաներ և մեխանիզմներ, այդ թվում՝ աշտարակային կոունկ, բետոնատար մեքենա, եռակցման ագրեգատ, բուլդոզեր, շարժական կոմպրեսոր, տոփանիչ, էքսկավատոր, ավտոբետոնատար և այլն:

Ապամոնտաժման աշխատանքները կատարվելու են ձեռքով, բահերով և տեխնիկայով՝ մի քանի փուլերով: Քանդման արդյունքում առաջանալու են տարբեր տեսակի թափոններ՝ մոտ 2100 մ³ շինադրի տեսքով, ինչը հեռացվելու է համայնքապետարանի կողմից հատկացված տարածք, ինչպես նաև շինարարական տարբեր նյութեր՝ փայտ, պատուհաններ, մետաղական մասեր, քար և այլն: Քանդման արդյունքում առաջացող թափոնները տարանջատվելու և կուտակվելու են առանձին: Օգտագործման համար պիտանի թափոնները հանձնվելու են բնակչության անպահով խավերին, իսկ մնացածը՝ տեսակավորվելու են, հանձնվելու են համապատասխան մասնագիտական կազմակերպություններին կամ տեղափոխվելու են աղբավայր:

Հողային ռեսուրսների պահպանության նպատակով շինարարական նյութերը տեղադրվելու են բետոնապատ մակերեսի վրա: Շինարարական նյութերից օգտագործվելու են բետոն, քար, ամրան, ավազ, ապակի, ջերմամեկուսիչ նյութեր և այլն: Առաքումն իրականացվելու է պարբերականությամբ, որը կապահովի աշխատանքների անընդհատությունը:

Շինհրապարակում բետոնի շաղախի պատրաստման հանգույց չի նախատեսվում: Բետոնը և շաղախը մատակարարվելու են մոտակա բետոնաշաղախային հանգույցից՝ մասնագիտացված տրանսպորտային միջոցներով:

Շինարարության ժամանակ բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ աշխատանքային հարթակի ջրցանի, հանված գրունտի և ստացվող ավազի ու խճի խոնավացման, ինչպես նաև շինարարական անձնակազմի խմելու և կենցաղային նպատակների համար:



ժամանակահատվածի համար ընդհանուր ջրօգտագործումը հաշվարկվել է ըստ սպասարկող աշխատողների թվաքանակի (45 մարդ), ինչը կազմում է 771.2 մ³/շին.ժամ: 750 մ³ ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը կկազմի 1.219 մ³ /օր:

Շինարարության ընթացքում աշխատողների կենցաղային նպատակների համար օգտագործվելու է գործող դպրոցի գոյություն ունեցող ջրագիծը: Ջրցանի համար նախատեսվող տեխնիկական ջուրը բերվելու է ավտոցիստեռնով՝ համապատասխան լիցենզավորված ընկերություններից: Ջուրը լցվելու է տարածքում տեղադրվող 5տ տարողությամբ բաքի մեջ: Ջրի մատակարարման հաճախականությունը կատարվելու է ըստ կարիքի: Տեխնիկական ջուրն ըստ անհրաժեշտության օգտագործվելու է հրդեհամարման, ջրցանի և անիվների լվացման համար:

Շինանյութերի ժամանակավոր պահեստավորումը, թափոնների կուտակման վայրերը և այլն, կազմակերպվելու են բացառապես շինարարության տարածքի սահմաններում:

Կրթահամալիրի կառուցումը ենթադրում է հողային աշխատանքների իրականացում: Ե/բ հիմքերի տեղադրման համար կատարվելու է մոտ 15284.2 մ³ ընդհանուր ծավալով հողային զանգվածի հանույթ, որից ետլիցքը կազմում է 1169.9 մ³: հողաբուսաշերտը կազմում է 2800.0 մ³: Բուսաշերտի պահպանումը կատարվելու է Կառավարության 2017թ. Նոյեմբերի 2-ի N¹⁴⁰⁴-Ն որոշման համաձայն՝ հետագայում օգտագործվելու է բարեկարգման աշխատանքների ընթացքում: Ավելացած հողային հանույթը կտեղափոխվի համայնքապետարանի կողմից հատկացված վայր:

Կենցաղային աղբը, որի ընդհանուր քանակը գործունեության ողջ ընթացքում կանխատեսվում է մոտ 9450 կգ/տարի, կտեղափոխվի աղբահավաք ծառայություն իրականացնող ընկերության կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքի բարեկարգում և կանաչապատում: 8764 քմ մակերեսով տարածքում տնկվելու են նոր ծառեր՝ 117 հատ, որից հացենի՝ 62 հատ, թխկի՝ 30 հատ, տույա՝ 25 հատ, ինչպես նաև թփեր:

Կանաչապատումն իրականացվելու է Սիսիանի համայնքապետարանի կողմից համաձայնեցված: Տարածքում առկա են մոտ 20 բարդի ծառեր և 30 պտղատու ծառեր, որոնցից մի քանիսը չորացած են և խոչընդոտում են նախագծով նախատեսված կառուցապատման և շինարարական աշխատանքներին, ուստի հատվելու են՝ 7-8 ծառ, փայտանյութը հանձնվելու է տեղի անապահով բնակչությանը:

Հաշվի առնելով ոռոգման համակարգի բացակայությունը՝ դպրոցի կանաչապատ գոտիների ոռոգման նպատակով, շահագործման փուլում պայմանագիր կկնքվի համապատասխան ջրօգտագործման թույլտվություն ունեցող ընկերությունների հետ՝ ոռոգման ջուր ձեռք բերելու համար:

Նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են լինելու քանդման, փորման, բեռնման, հողային, բետոնային աշխատանքների, հողային զանգվածների և թափոնների տեղափոխման, նյութերի օգտագործման, շինարարական տեխնիկայի, մեխանիզմների շահագործման, ճանապարհների ծանրաբեռնվածության, արտակարգ իրավիճակների առաջացման հետ:

Համաձայն ՇՄԱԳ հաշվետվության՝ նախատեսվում են օդային ավազանի, հողային և ջրային ռեսուրսների աղտոտումից պահպանման, դրանց արդյունավետ օգտագործման, թափոնների կառավարման, աղմուկի մակարդակի, արտակարգ իրավիճակների ռիսկի նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառում են բնապահպանական միջոցառումների ծրագրում և մոնիթորինգի պլանում: Ինչը ներառում է

- շինարարության ընթացքում օդային ավազան փոշու արտանետումների բնակարանային նվազեցնելու նպատակով՝ ջրցանի կատարում,



- աղմկահարույց աշխատանքների իրականացում օրվա ցերեկային ժամերին,
- աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ,
- սորուն նյութերի պահեստների ծածկում համապատասխան բարձրության թաղանթով,
- սորուն շինարարական նյութերի և հողային զանգվածի տեղափոխում փակ ծածկով մեքենաներով,
- հեղուկ նյութերի պահում հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար,
- շինարարական աշխատանքներում ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցների ներգրավում, ինչպես նաև դրանց տեխնիկական նորմալ վիճակի շահագործման ապահովում,
- շինհրապարակում քանդման և շինարարության ընթացքում թափոնների տարանջատում,
- տնկված ծառերի և խոտածածկի խնամք,
- շինարարության ընթացքում աշխատանքի անվտանգության և արտակարգ իրավիճակների պահպանում և այլն:

Մշտադիտարկումների համար շինարարության ընթացքում հատկացվել է տարեկան մոտ 300.0 հազար ՀՀ դրամ:

Պատճառաբանական եզրահանգումներ. համաձայն ՇՄԱԳ հաշվետվության՝ Սյունիքի մարզի Սիսիան համայնքի Շաքի բնակավայրի կրթահամալիրը կառուցվելու և շահագործվելու է գործող օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան: Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր բացասական ազդեցությունները լինելու են շինարարության փուլում և կրելու են ժամանակավոր բնույթ:

Փորձաքննական գործընթացին ներգրավվել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, Սյունիքի մարզպետարանը, Սիսիանի համայնքապետարանը, շահագրգիռ հանրությունը:

Փորձաքննական գործընթացում կատարվել է հաշվետվության լրամշակում, որտեղ հաշվի են առնվել ներկայացված առաջարկություններն ու դիտողությունները:

Օրենսդրությամբ սահմանված կարգով՝ գնահատման և փորձաքննության ընթացքում Սյունիքի մարզի Սիսիան համայնքի Շաքի բնակավայրում իրականացվել են հանրային լսումներ, ինչի ընթացքում հանրությունը դրական է արտահայտվել նախատեսվող գործունեության վերաբերյալ:

Փորձաքննական պահանջներ

- Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է հետևել գնահատման հաշվետվությամբ ամրագրված բնապահպանական միջոցառումների կատարմանը, ժամանակացույցին, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ուղղված բնապահպանական և շինարարական նորմերի պահպանմանը:

- Քանի որ կառուցապատան աշխատանքները իրականացվելու են գործող դպրոցի տարածքում, անհրաժեշտ է խստագույնս հետևել անվտանգության կանոններին և ձեռնարկել համապատասխան միջոցառումներ՝ դպրոցականների մուտքը շինհրապարակից բացառելու նպատակով:



- Նախատեսվող շինարարական աշխատանքներն անհրաժեշտ է կատարել օրվա սահմանված ժամերին՝ հնարավորինս նվազագույնի հասցնելով բնակելի տարածքներում աղմուկի և ճանապարհների առավելագույն բեռնվածությունը:

- Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների կուտակումն ու հեռացումն անհրաժեշտ է իրականացնել « օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Սիսիանի համայնքապետարանի հետ համաձայնեցված:

- Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում պահպանել քաղաքաշինական, արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության նորմերը և պահանջները:

ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ՄԱՍ

«Շին Կոմֆորտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Սյունիքի մարզի Սիսիան համայնքի Շաքի բնակավայրի կրթահամալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական պետական փորձաքննական եզրակացություն՝ փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի փոխտնօրեն՝

Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխ. մասնագետ՝

Արմինե Վարդանյան